

ՍԻՄՈՆ ԲԱՍԻՆԻՔԻ

ԱՐԵՎԱԴԻԱՅԻ


ԱՇԽԱՋԱԳՈՐԾՅՈՒՆ

III Համարներ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԻ, Ար. Ավ. Ա. Խ. Հ.

ԼՈՒՍԱԳՐԻ-

ԿՈՄԱՑԻ



91(4)922.6
թ-31

ԱՐՄ. ՏՐԱՎԱ

1934 թ.

10 NGV 2011

91(42-922-62)

F - 31

մէ

ԱԿԱԴԵՄԻԱ

1004
31565

3696
3696

ԱՐԵՎԱԴԻԱՅԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

III իմբի համար:

Հրատարակություն Ար. Ավ. Ս. Խ. Հ. Լուսժողկոմանի

ՍՈՒԽՈՒՄ



1934 թ.

География Абхазии для III группы

Перевод А. Калантаряна.



ԱՐԻԱԶԻԱՅԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ.

Կիսագնդերի քարտեզի կամ զլոբուսի վրա նայելիս մենք կտեսնենք, վոր յերկրագնդի մեծ մասը բռնում է ջուրը, իսկ փոքր մասը՝ ցամաքը: Վողջ ցամաքը բաժանվում է վեց աշխարհամասերի, վորոնք են՝ Յեվրոպա, Ասիա, Աֆրիկա և Ավստրալիա—արևելյան կիսագնդի վրա, Ամերիկա (հյուսիսային և հարավային) — արևմտյան կիսագնդի վրա ու Անտարկտիդա—մասամբ արևելյան ու մասամբ արևմտյան կիսագնդերի վրա:

Խորհրդային հանրապետությունների միությունը (Ս. Խ. Հ. Մ.) բռնում է ցամաքի մի վեցերորդ մասը և հանդիսանում է յերկրագնդի ամենամեծ պետությունը: Նա ընդգրկում է Յեվրոպայի արևելյան շերտն ու Ասիայի հյուսիսային մասը: Ս. Խ. Հ. Մ. միացնում է յոթը խորհրդային սոցիալիստական հանրապետությունները: Այդ հանրապետություններից մեկն է Անդրկովկասյան խորհրդային ֆեդերատիվ սոցիալիստականը—Ս. Խ. Խ. Ֆ. Հ., վորը բաղկացած է յերեք հանրապետություններից՝ Վրաստանի, Ադրբեյջանի և Հայաստանի: Ս. Խ. Խ. Ֆ. Հ. Հ. տեղավորութած է Կովկասյան լեռներից հարավ՝ Սև ու Կասպից ծովերի միջին: Արխագիւան, վորպես ավտոնոմ հանրապետություն, մտնում է Վրաստանի Ս. Խ. Հ. կազմի մեջ:

Ս. Խ. Հ. Վրաստանը բաժանվում է յերկու մասի՝ Արևելյան և Արևմտյան: Արևելյան Վրաստանը Սուբամի լեռներով բաժանվում է Արևմտյանից:

Վրաստանի Արևմտյան մասին անմիջականորեն հարում է, նայել խորհրդային Արխագիւան:


Վրաստանի, ինչպես և Արխագիւայի մակերեսույթը բազմազան է: Նայեցեք քարտեզին, ուշը դարձրեք տարբեր գույների վրա: Կանաչը՝ ցածրություններ են, բաց—գեղնագույնը՝ բարձրություններ են, մութ—կինամոնագույնը՝ լեռներ են, վորքան բարձր են լեռները, այնքան ավելի մութ ե գույնը:

II. ԱՐԻԱԶԻԱՅԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ, ՍԱՀՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ:

Արխագիւայի ավտոնոմ սոցիալիստական խորհրդային հանրապետությունը մտնում է Վրաստանի կազմի մեջ և ապա Ս. Խ. Խ. Ֆ. Հ.-ի մեջ:

Արխագիան գտնվում է Աև ծովի արևելյան ափին: Նրա
մակերևույթը հավասար է 8664 քառ. կմ:

ՍԱՀՄԱՆՆԵՐԸ: Արխագիան ունի հետեւյալ սահմանները:
հյուսիս—արևմուտքում, Սոչիի կողմից՝ Պսոռ գետը, հարավ—
արևմուտքից՝ Սև ծովը, արևելքից ու հարավ—արևելքից՝ Մին-
պելիա (Ռդիշ): Այս կողմից սահմանը սկսվում է Խոդուրի գե-
տաբերանում, բարձրանում և հոսանքով գետի վեր մնու 28 կմ-
իսկ հյուսիսից՝ Կովկասյան զվարար լեռնաշղթան: Վերջինա
բաժանում է Արխագիան Կարաչայի ավտոնոմ շրջանից ու Մայ-
կոպի ռայոնից:




Նկ. 1 Արխագիայի քարտեզը:

Հարցեր. Ցույց տվեք քարտեզի վրա Ա. Խ. Հ. Մ.
Ցույց տվեք քարտեզի վրա վողջ Կովկասը:
Ցույց տվեք հյուսիսային Կովկասը:
Ցույց տվեք Անդրկովկասը:
Ցույց տվեք Վրաստանը:
Ցույց տվեք Արխագիան ու նրա սահմանները:
Ցույց տվեք Ա. Խ. Հ. Մ., Վրաստանի ու Արխա-
գիայի հարթությունները:
Ցույց տվեք Արխագիայի ու Վրաստանի
բարձրություններն ու ամենաբարձր լեռները:
Զագեցեք Արխագիայի քարտեզի մասշտաբը:
Արխագիայի ծովային սահմանի յերկայնությունը:

ՍԱԿԵՐԵՎՈՒՅԹԸ: Արխագիայի մակերևույթը միապաղաղ չե-
մակագանց բազմազան:

ԾՈՎԱՓՆՅԱ ԱԵՐՏԸ: Ծովափնյա շերտն իսկ ունի ալիքաձև
քնույթ: Այստեղ հաճախ ցածրությունները վերածվում են ան-
հարթությունների, իսկ տեղ—տեղ, ծովափնյա բավականաչափ
հեռու, մակերեսույթը, վերածվում է մեծ բլուրների ու խորունկ
ձորերի: Նման յերևույթների մենք հանդիպում ենք հետեւյալ
գյուղերում. Բլարուրիվա, Խուապ, Բիրջա, Ջիգերդա, Ծերելդա
(Յաբալ), Չիլու, Տկվարչելի (Տկվարչալ), Քեղիա—առաջին,
Չիսրտու, Գումբիշ ու շատ ուրիշ լեռնային գյուղերում ու
գյուղակներում: Հարթությունները պատահում են գետերի հո-
գիաներում և այն ել գյիւղագորապես նրանց ստորին հոսանքում.
որինակ՝ Խոդուրի, Ոխուրեյի, Գալիզգի (Ալցգա), Մոկիի, Դը-
գամիշի, Կոդորի, Մաջարի, Գումիստայի, (Գումա) և այլն:




Նկ. 2 Լեռնային ճանապարհ:

■ ■ Ընդծովյա հարթ տեղերը (ցածրությունները) գերազան-
ցապես տեղավորված են Գալիի ռայոնում, Վորտեղ նրանց լայն-
ությունը համառում է 40 կմ. աստիճանաբար սեղմվելով նրանք
անցնում են Ոչեմշիրի, Սուխումի, Գուդառուտի ու Գագրայի
ռայոններուի:

Ծովափնյա շերտում տեղավորված են Արխագիայի քաղա-
քներն ու համարյա բոլոր գյուղերը: Ծովափնյա շերտից հետո
ակավում է Արխագիայի լեռնային մասը:

ՆԱԽԱԼԵՐՆԱՅԻՆ ՇԵՐՏ: Նա կտրատված և ու հատվում է
խորը կիրճեր կազմաղ գետերով. ինչքան մոտենում է գյիւղոր
լեռնաշղթային, այնքան ավելի անմատչելի յեղանում լեռ-

Նային Արխագիան. մարդիկ ստիպված են լինում շատ թեք դառի-
վայրերով ու վերելքներով բարձրանալ:



Նկ. 3 Լեռնային արոտներ:

Նման տեղերում ճանապարհին ընկած են մեծ քարեր: Շա-
վիզներն անցնում են գլխավորապես լեռան լանջերով, վորով-
հետեւ շատ գետերի կիրճերը այնքան ուղղահայաց են ու նեղ,
վոր չկա վոչ մի հնարավորություն անցնելու նրանց միջովէ
Բայց առողջություն են կազմում կողորի, ჩղիքի ու փումայի քիչ
թե շատ լայն հովիտները: Լեռների խորքում, մի քանի գետերի
կիրճերում կան և բնակելի վայրեր:— Գենցվիշ, Աժարա, Պաիշ
Չխալտա, Լատա, Պախու:

Գետերի ակունքներում կիրճերի լանջերն այնքան գահա-
վեծ են, վոր ձմռանը տեղացող առատ ձյունը սարսափելի հյու-
սերով սողում ե ցած և բռնում ե գետերի հունը:

Այդ հսկայական ձյունի մասսան հաճախ մնում ե մինչև ամառ
շատ տեղերում: Լեռնային գետակները ճանապարհ են բաց ա-
նում իրանց համար այդ կույտերի տակ և ստացվում ե ձյուն և
կամուրջ, վորոնց վրայով, վաղ գարնանը հովիտները քշում
են իրանց անապահնը: Յերբ համում ես մարգագետիններին—
ամառային արոտներին, այնտեղ կարծես տեղը ավելի հարթ ե
և շարժումները լինում են ավելի ազատ:

Այդ մարգագետիններում աճում ե առատորեն հյութեղ
խոռը: Ամենալավ արոտային մարգագետիններ կան Սուխումի
սայսնի բարձր լեռնային մասերում ու Բղիբյան (Զաղիմ) յերկ-
որդական լեռնաշղթայի վեցերին:


Առասարակ Արխագիայի լեռնային մարգագետինները գը-
տնվում են կողքի (յերկրորդական) լեռնաշղթաների վրա, Գա-
գրիի, Բղիբի, Կողորի (Պանավի):

Արխագիայի սահմանների մեջ, գլխավոր լեռնաշղթայի լան-
ջերին մարգագետիններ համարյա չկան. Մարուխի արոտատե-
ղերն ունեն տեղ—տեղ, տավարի համար դժվարանցանելի լան-
ջեր:

Իրանց տեղադրությամբ ու խոտի առատությամբ Արխագ-
իայի լավագույն լեռնային մարգագետիններն են համարվում
Աղենզը, Աչագարա, Շիապղչա, Շոռղիդ, Սակեն, Գղիխվա,
Կունիաշտա, Ախաբվա և ուրիշները:

ԼԵՐՆԱՅԻՆ ՄԱՍԸ: Մեր լեռների ու արոտների դժվարամատ-
չելիությունը բացարկվում է նրանով, վոր մեր հանրապետու-
թյան սահմաններով անցնող Գլխավոր Կովկասյան լեռնաշղթան՝
այնպես կոչվող Արխագական Ալպերը շատ են մոտենում ծովի
ափերին:

Այդ—Ալպերից բաժանվում են յերեք կողքի (յերկրորդա-
կան) լեռնաշղթաներ՝ Գագրիի, Զաղիմի ու Պանավի, վորոնք
իրանց հերթին ձյուղավորվելով բազմաթիվ լեռնային ձյուղերի,
տեղ—տեղ ընդհուպ մոտենում են ծովի ափին (Գագրի, Պուր-
ցիա): Գլխավոր Կովկասյան լեռնաշղթան ունի անընդհատ շղ-
թայի բնույթ:



Նկ. 4 Կովկասյան լեռնաշղթան:

Նրա մնացյալ բոլոր փեշերը վոչ—մեծ շղթաներ են, վո-
րոնք կտրնված են բազմաթիվ գետերով: Այդ ձյուղավորումները
մոտենալով ծովին կտրատում են Արխագիան բազմաթիվ ուղ-
ղություններով.

Յերբ մենք նայում ենք ծովափից լեռների վրա, հաճախ տեսնում ենք վոչ թե Գլխավոր Կովկասյան լեռնաշղթան, այլ նրա առանձին փեշերը, վորոնք ձուլվելով իրար հետ, մեզ թը-վում են իրեւ անընդհատ շղթա: Կովկասյան լեռնաշղթան լավ ցերեսում ե շոգենավից, նայել Աղջուբժայից՝ կիրճի միջով, կին-դղից, թամիշից և Գալիի ռայանի վարոշ մասերից:

Արխազական Սլպերի սահմաններում գլխավոր լեռնաշղթան տեղ—տեղ ծածկված է դարավոր սառցադաշտերով. Մեծ սառցադաշտեր կան Երցախայում (Երցող) ու Մարուխի լեռնացքում:

Գլխավոր լեռնաշղթայի վրա կան իջվածքներ, վորտեղից կարելի յեւ անցնել Կովկասյան լեռների մյուս կողմուն նման ճանապարհներ են համարվում Մանչարայի, Մարուխի (բարձրությունը 2.726 մ.), Կլուխորի — 2816 մ. Նախարի — 2932 մ. լեռնանցքները:

Ամենահեշտ լեռնանցքներն են Կլուխորի և Մարուխի:



նկ. 5 Կլուխորի լեռնանցքը:

Վորպես հաղորդակցության ճանապարհներ հյուսիսային Կովկասի հետ՝ այդ լեռնանցքներով կարելի յեւ ոգտվել 3 ամիս: Թայացալ ժամանակ նրանք թաղված են ձյան հաստ շերտի տակ:

Ամասարաւակ Արխազական Սլպերում ձյունը չափազանց շատ է տեղում և ձյան սահմանը այսակ ավելի ցածր է, քան Կովկասյան լեռների հյուսիսային կողմում: Դա բացատրվում է նրանով, վոր Սև ծովից փչող քամիները շատ ավելի խոնավ են, քան հյուսիսային Կովկասի ցածրավայրերի չոր քամիները:

Հարցեր: Ինչն է դարձնում Արխազայի մակերեսույթը բաղմազան: Ցույց տվեք քարտեզի վրա՝ Արխազայի վիճակը մասում են գեղակշռում լեռները: Անվանեցեք Արխազայի լեռնային գյուղերը: Ցույց տվեք քարտեզի վրա Արխազական ալպերն ու նրանց փեշերը՝ Գալգրի, Բղիքի (Զարդի): Կողորի (Պանավի):

Ասացեք, ինչպիսի՞ հովիտներ գիտեք Արխազայում և վո՞ր գետերի ավազաններում են գոնվում:

Անվանեցեք և ցույց տվեք քարտեզի վրա լեռնանցքային ճանապարհները: Անվանեցեք այն լեռնային մարգագետինները, ուր քում են իրենց անապահութեան ամբողջ գովազները: Նկարագրեցեք նրանց պատմածով ճանապարհները: Ինչո՞ւ այդքան առատ ձյուն է տեղում Արխազայի լեռներում:

ԱԲԽԱԶԻԱՅԻ ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ՈՒ ԳԵՏՆԻ ԶՐԵՐԸ:

Հայտնի յեւ, վոր ինչքան յերկրում շատ են մթնոլորտային տեղումները, այնքան ավելի շատ են ու ջրառատ նրա գետերը:

Մթնոլորտային տեղումներն Արխազայում շատ են, որինակ՝ տարեկան տեղումների ընդհանուր քանակը Սուխումում հավասար է 1390 մմ. իսկ Գագրայում 1343 մմ. ըստ վորում տեղումներն ընդծովյա շրջանում ավելի շատ են աշնանն ու ձմրանը, քան ամրանը: Անա մթնոլորտային տեղումների նման առատությամբ կարելի յեւ բացատրել Արխազայի մակերեսույթի ու գետնի ջրերի հարստությունը:

ԳԵՏԵՐԸ: Ամենամեծ գետերն են համարվում Բղիքն ու Կողորը: Նրանք ծայր են առնում Գլխավոր Կովկասյան լեռնաշղթայից: Բղիքի ակունքը գտնվում է Ալափուրա կոչված վայրում, Բաշկուփսարայի արդաներից քիչ բարձր:

Բղիքի մեջ են թափվում չափազանց շատ գետակներ ու գետեր, նրանցից ամենախոշորներն են Դեգե ու Զիառ:

Կողոր գետն ունի յերկու խոշոր վտակ՝ Զիառտա և Սակեն: Բացի Բղիքից ու Կողորից, կան և ուրիշ գետեր, վորոնք են՝ Ալղա, Կելապուր, Գուսու, Պառու, Խիպսի (Սպիտակ գետ) — սրանք ծայր են առնում յերկրորդական լեռնաշղթաներում: Նրանք սնում են լեռների ձյան հակայական կույտերը: Վերջապես կան բազմաթիվ մանր գետեր, վորոնք ծայր են առնում փոքր լեռնաշաբաթերի խոր կիրճերում և սնվում են լեռների ստորերկյա ջրերով: Գրանք են՝ Մշշ (Սև գետ), Ապսի, Ոկում, Բղամիշ, Մոկի, Բալա (Բեսկետկա) և այլ Մեծ գե-


տերը վարարում են գարնանը, յերբ սկսվում է ձնհալլ լեռներում, իսկ ձմրանը լինում են սակավաջուր: Փոքրիկ գետերը վարարում են առառ մթնոլորտային տեղումների ժամանակ (անձրևներից կամ ձյունից):

Արխազիայի գետերը յերկայն՝ չեն, բայց գահավիժելով մեծ բարձրություններից կազմում են փրփրան ջրվեժներ ու չափազանց արագքնից են: Արխազիայի մակերեսույթն ունի թեքում գետի հարավարևմուտք, ուստի և բոլոր գետերը հոսում են այդ ուղղությամբ:

Ամենամեծ գետերը՝ Բզին ու Կողորը սկզբում փոքր են, բայց ճանապարհին ընդունում են իրենց մեջ նոր ու նոր առավակներ, վորոնք հոսում են գլխավոտված բարձրություններից:

Այդ միացյալ ջրային մասսան, չնայած բազմաթիվ արգելքներին իրան ճանապարհ ե բաց անում լեռնազանդվածների մեջ:

Քարե գիդանտ—ժայռերը իրանց կրծքերը դեմ են տալիս խիզախ ու ուժեղ հարձակմանը, ջանալով պահել յուրաքանչյուր ավազի հատիկը, սակայն աստիճանաբար, աննկատելի կերպով մաշվում են նրանք և կամա—ակամա գլորվում լեռնային գետի կաթնոս ջրերի մեջ, մինչև տան մեծություն ունեցող, ահազին ապառաժի կտորներ: Դա արդյունք ե գետերի դաբավոր համառ աշխատանքի:



Նկ. 4 Լեռնային գետն ու նրա աշխատանքը:

Արխազիայի լեռնային գետերը՝ ծակելով կիրճերի մեջ ձյան հակայական կույտերը, ստեղծում են ձնե կամուրջներ:

Բզին ու Կողորը իրանց միջին հոսանքներում նունյակա

որընթաց արագ են: Հաղթահարելով բազմաթիվ արգելքներ, դուրս գալով ավելի ընդարձակ տեղ, իրանց ներքին հոսանքներում այդ գետերը համենայն գետս արագավագ են ($5 \frac{1}{2}$ հանգույց՝ մի ժամում), վորովհետև շատ ուժեղ և թափը իրանց ճանապարհի լեռնային մասում: Գարնանային ձնհալի ժամանակ, հալված ձյան ջուրը լցնում ե գետերի հունը, ավելանում ե նրանց խորությունն ու արագությունը: Նրանք վողողում են գյուղացիական դաշտերը: Նահանջելով իրանց հունի մեջ, գետերը հաճախ անպետքացնում են վողողված դաշտերը, թողնելով այնտեղ խիճ ու ավագ: Գյուղի ազգաբնակչության զրույցների մեջ անեծքով եյին հիշում այդ գետերը, վորովհետև վոչ վոր չգիտեր, թե ինչպիսի ոգտավետություն կա նրանց սրբնացության որոք, յերբ սկսեցինք նոր ձեռնով վարել անտեսությունը, իմացանք այն ողումների մասին, վոր կարելի յերստանալ գետերից:

Ի՞նչ խմացանք:

Գետերի ուժը կարելի յե ոգտագործել չի դը ո ել ե կ տ ը ու կ ա յ ա ն ն ե ը ի կառուցման համար: Այդ կայսմանները մեզ տալիս են ելեկարականություն, վորով մենք լուսավորում ենք շենքերը, վորով մենք ոգտվում ենք, իբրև ֆաբրիկանների ու գործարանների շարժիչ ուժ:

Ներկայումս մենք Սուխումում, Պոլրցիայում Գազրայում ունենք հիգրո—ելեկարոկայաններ: Կառուցվում ե Գումայիշի վրա մի հզօր կայան:

Ի՞նչպիսի՞ ուժ ունեն մեր գետերը:

Գուման ունի	6. 000	ձիու ույժ:
Կելասուրը	8. 000	ձիու ույժ:
Աալցգան	20. 000	ձիու ույժ:
Բզինը	101. 000	ձիու ույժ:
Կողորը	218. 000	ձիու ույժ:
Յեթե ավելացնենք սրա վրա և մանք գետերի ույժը, մենք կստանանք 400. 000 ձիու ույժ:		


Ահա թե ինչպիսի հսկայական ոգտակար ուժ մեր գետերը ամեն տարի ապարդյուն տանում: Են ծովը: Այդ ուժը, վոր կոչվում ե „սալիտակ ածուխ“ իր արժեքով հավասար է 177. 000 վագոն քարածուխի կամ 1. 500. 000 տոնն նավթի: Խորը հրդային իշխանության որոք գետերի այդ ուժը ոգտագործվում է հիգրո—ելեկարոկայանների կառուցման համար առաջին հերթին՝ Գումա, Աալցգա, Գետե:

Բացի վրանից, Բզին ու Կողոր գետերը ծառայում են իբրև թե անտառանյութերի փոխադրության միջոց, Որինակ՝ Կողորի

առախտակի գործարանը կողորի միջոցով ստանում ե Զիսալտայի անտառամթերման կայաններից անհրաժեշտ գերանները:

ԼՃԵՐԸ: Արխազիայում մեծ լճեր չկան: Քիչ թե շատ խոշոր ե համարվում Ռիցա լիճը, վոր գտնվում է Բղիբյան Արխազիայի լեռնային մասում:

Այդ լիճը հարուստ է ձկնով: Վայրը, վորսեղ գտնվում է լիճը, չափազանց գեղատեսիլ և և առողջ ունի լեռնային կլիմա՝ հարուստ փշատերե բուսականությամբ. Ռիցայի շրջանը սպասդիվելու յե կուրորտային շինարարության նպատակների համար:



Նկ. 7 Ռիցա լիճ:

Մնացյալ, աննշան լճերից հայտի յեն՝ ինկիտ և Անիշխացարա լճերը Պիցունդայում, Բերեսիք—Գալիք ույսոնում: Կան բազմաթիվ մանր լճեր լեռնային հովաններում, որինակ՝ Գվարավի, Խեմցայի մարգագետիններում և այլն:

ՃԱԼԻՃՆԵՐ: Ծովափում, Արխազիայի ցածր տեղերում կան ճահճներ: Նրանք շատ են մասնավանդ Գուղավա—Գագիգայի շրջանում: Կան ճահճներ նայեավ Սուխումի արևմայան մասում, Պիցունդայում, Կոլխիզայի շրջանում և Ոչեմշիրում: Ճահճների միջոցով արածվում ե մալարիան, ուստի խորհրդային իշխանությունը սկսեց չորացնել ճահճները: Բոլորովին չորացված են Պիցունդայի ճահճուր վայրերը:

Սկ ԾՈՎ: Մեր գետերը հոսում են մի հարթությամբ, այսին-

քն հարավ և հարավ—արևմայան ուղղությամբ: Նրանք բոլոր թափվում են Սև ծովը, վորը Արխազիայի ափերին յերբեք չե սառչում:

Թե կլիմայական, թե հաղորդակցության ձանապարհների թե առևտրի թե ձկնային հարստությունների տեսակետից Արխազիայի համար մեծ նշանակության ունի այդ ծովը:

Փոթորկու, վատ յեղանակներին Սև ծովը շատ և հուղվում: Լինում են ղեպքեր, յերբ ծովային ալիքներն ափ են շըպրուսմ նավեր ու մակույկներ նման փոթորկի ժամանակի քամիններից լավ պաշտպանված Սուխումի ծոցը գտնում է առաջատանավերի ու շոգենավերի տպաստարան:

Բացի Սուխումի ծովախորշից, կան ավելի փոքր, բավականչափ հարմար ծովախորշեր Գաղրիում, Պիցունդայում, Պիբրցիսյում, Գուղավուսում: Այդ ծովախորշերում կան նավահանգիստներ:

Ներկայումս կան ծովային արանսպորտի հետեւալ կետերը Գաղրի, Գուղավուս, Պիբրցիս, Սուխում, Ոչեմշիր:

Սև ծովի ջուրը գտնաղի յե, թեպետ և ծովի վերին շերտերում քիչ աղի, շնորհիվ մթնոլորտային առատ տեղումների ու գետային ջրերի մեծ հոսանքին, վորոնք գերազանցում են գոլորշիացմանը: Ինչքան ավելի խորը, այնքան ավելի աղի յե Սև ծովի ջուրը: Սև ծովի Արխազական ափերին կան շատ ձրկներ որինակ՝ սեղ, խամսա, տափակածուկ, կեֆալ, ասեղնաձուկ և այլն: Կան նաև գելֆիններ:

Կոռպերատիվ կազմակերպությունները մեծ հաջողությամբ պարագում են ձկնորսությամբ: Հատուկ նշանակություն ունի գելֆինորսությունը, —Պիբրցիսյին մոտիկ աշխատում և գելֆինի ճարպահալ գարծարանը:

Գուղավուսի ափերին չափազանց առատորեն վորսում են վոստրեներ, վորոնք նույնիսկ արտահանվում են:

Հարց երբ ծույց տվեք քարտեզի վրա Արխազիայի գետերի ակտոնքներն ու ուղղությունը:

Նկարագրեց այդ գետերի հատկությունը (աեժիմը)՝ Ի՞նչ ոգուտ են տալիս մեր գետերը:

Կազմեցեք գիողբամմա՝ „Արխազիայի գետերի ուժը Պատմեցեք, թե ի՞նչ նշանակություն ունի Սև ծովը Արխազիայի համար”

IV. ԱԲԽԱԶԻԱՅԻ ԿԼԻՄԱՆ.

Արխազիան տեղավորված է Սև ծովի չառչող ափերին: Նա բաց ե ծովային հարավ արևմայան տաք քամինների համար, իսկ հյուսիսային ցուրտ քամիններից պաշտպանիված է Կովկասյան Գլխավոր լեռնաշղթայի միջոցով: Դրա համար ել մեր յերկիրն ունի, ազգաբնակչության զբաղմունքի ու առաջու-

Թյան համար, շատ բարեհպաստ կլիմա։ Մեզ մոտ տարին ունի չորս յեղանակ և յուրաքանչյուրը նրանցից հայտնի յէ իր բարեխառնությամբ։ Դա բացարվում է Արխաղիայի՝ լեռների ու ծովի հանդեպ ունեցած դիրքով։

Իրեւ հաղվագյուտ յերեսույթ, յերեմն մեզ մոտ ել լինում են ցուրտ ձմեռներ մեծ ձյունով։ Դա բացարվում է նրանով, վոր յերեմն հյուսիս—արևմուտքից մեզ մոտ են հասնում պըտըլալ քամիներ (ցիկլոն), վորոնք խիստ իջեցնում են ջերմությունը։ Այս ժամանակ Արխաղիայում լինում են կարգին սառնամանիքներ, վորոնք շուտով անցնում են, հենց վոր ցիկլոնը դադարում ե։ Առհասարակ տվյալ յերկրի կլիմայի մտախն չի կարելի դատել նրանով վոր մեկ կամ յերկու ձմեռ շարունակ լինում ե շատ շոր, չորային ու կամ խոնավ։




նկ. 8 Գուլբեղչի Լենինի անվան սահմանադրիան։

Հարկավոր ե դիտել յեղանակի դրությունը յերկար տարիներ շարունակ, վորպեսզի կարելի լինի վորոշել վորոնք յերկրի կլիման։

Ահա այսպիսի դիտողությունը մեզ առան ե, վոր Արխաղիայի ծովափնյա մասը ունի տաք, ծովային կլիմա։ Բայց Արխաղիայի մտկերեւոյթի բազմազանության շորհիվ, նրա կլի-

ման ևս բազմազան ե։

Արխաղիայի ընդծովյա մասն ե, վոր ունի բարեհպաստ կլիմա, վորի մասին մենք վերել խոսեցինք։ Այս շրջանները, վորոնք իրենց բնությամբ մոտիկ են արեաղարձային յերկրներին, կոչվում են մերձականությունը 14°-ից 15° ե։ Ընդծովյա քամիներն այսուեղ մեղմ են. որվա ընթացքում վշում է թեթև քամի ծովից կամ լեռներից. առավտովանից վչում և լեռների քամին դեպի ծովը, իսկ կեսորից հետո, յերբ հողը տաքանում է, վշում և թեթև ծովային քամին դեպի ցամաք։



նկ. 9 Փյունիկյան արմավենու ծառուղի։


Նման կլիման հսարավորություն և տալիս աճելու մեջ մոտ առաք յերկրների բուսականությանը (կիտրոն, նարինջ, արմավինիներ և այլն)։ Նման կլիման հսարավորություն և տալիս անսկելու կամ ցանելու մեր սովորություն ու կոլտուններում շատ թանկազին ու արժեքավար մշակույթներ (յեթերարեր բույսեր, կիտրոնավորներ, թեյ, ծխախոտ)։

Արխաղիայի կլիման շատ նպաստավոր և թոքային հիմանդների համար, վորովետև չսայած մեծաքանակ տեղումներին

ու ողի մեծ խոնավությանը՝ Արխագիան ունի շատ արևոտ, պայծառ որեր. որինակ՝ Սուխումում պայծառ, արևոտ որերի թիվը տարեկան հասնում է 217-ի, այնինչ կիսովողսկում 84 է, իսկ Դավոսում (հայտնի տրտասահմանյան կուրորտ) 99 արևոտ որ կա տարվա մեջ:

Յերբ Միության մյուս հանրապետությունների մեջ սկսվում են ցրտերն ու սահմանիքները՝ թոքային հիվանդները դալիս են Արխագիա (Սուխում, Պիրցիսա, Գագրի), ուր այդ ժամանակ չկան վոչ սահմանիքներ և վոչ սասր քամիներ:

Նման հիվանդների համար Ա. Խ. Հ. Մ.-ի մասշտամով լավագույն սահմանությաները գտնվում են Արխագիայում (Գուշիլ, Գագրի, Պիրցիսա). Նրանք չեն զիջում արտասահմանյան սահմանորիաներին:



նկ. 10 Գուլբիսի սահմանորիան կարմիր շենք:

Բացի գործող սահմանորիաներից 2-րդ հսկամյա պլանի մեջ նախագծվում են մեծ սահմանորիաներ՝ Գուշտառուտմ, Մյուսերում, Գագրիում, Պիրցիսայում: Բացի ծովափնյա սահմանորիաներից յնթափրում է կառուցել սահմանորիաներ Արխագիայի լեռնային մասում:

Ծովափնյա ցածրությունից դեպի լեռները, քանի մոտե-

նում ենք գլխավոր սառցադաշտային չղթային, կլիման դառնում է ավելի ցուրա: Արխագիայի բարձր լեռնային մասերում կլիման բոլորովին այլ է: Այնտեղ չափազանց շատ ձյուն է տեղում, լինում են սառնամանիքներ: Ամառն այնտեղ տեսում է շատ կարճ և լինում է հով, իսկ գլխավոր լեռնաշղթայի վրա յերբեմն ամառային գիշերներին լինում են թեթև սառնամանիքներ: Պատճառն այն է, վոր հնչքան բարձր՝ դեպի լեռները, այնքան ողբ ցուրտ է:

Հարցեր: 1. Արխագիայի կլիմայի մեջ ինչ գեր են խաղում գլխավոր Կովկասյան լեռնաշղթան ու Սև ծովը:

2. Ինչու տարբեր և կլիման զանազան վայրերում:

3. Ինչու մեզ մոտ յերբեմն լինում են շատ ցուրտ ձմեռ և մեծ ձյուն:

4. Ինչու Սուխումում, Պիրցիսայում և Գագրիում ավելի տաք և կլիման, քան Արխագիայի վայրերում:

5. Թվեցեք Արխագիայի սահմանորիաները:

V. ՀՈՂԵՐ

Արխագիայի հողը բազմատեսակ է: Ստորին Արխագիան մանավանդ գետերի հովիտներում ծածկված է ջրաբեր հողերով վորոնք շատ պտղաբեր են: Այստեղ աճում են արժեքավոր մերձ—արևադարձային բույսեր:

Միայն խորհրդային իշխանության բրոք Արխագիայի ագրարնակչությանը հայտնի դառափ, վոր լատիրի տ կոչված կարմիր հողը, ուր առաջ աճում եր միայն պտերը (պարտիկ), ամենալինանի հողն ե թեյի համար:

Այդպիսի հողերի վրա մենք ունենք ներկայումս խոշոր թեյի սովորողներ (Աչիդվարա, Սոկիլ և ուրիշ): Լատիրիտի հողը հանդիպում է գլխավորապես Գագրի և Ռէմշիրի ուայոններում: Կան հողերի ուրիշ տեսակներ ել. որինակ՝ մոխրագույն, կափային, շաղանակագույն և այլն, վորոնց վրա մեր կլիմայի պայմաններում աճում են զանազան ոգտակար բույսեր:

Մշակույթներից մի քանիսը, որինակ՝ ծխախոտը, շատ շուտով ուժասպառ և աճում հողը: Առաջ նման մաշված հողերը թողնում ենին հանգստանալու:

Ներկա, բանվորագյուղացիական իշխանության որոք մենք ապահովում ենք աշխատավորության լիակատար տիրապետությունը բնության վրա, փոփոխում ենք հողերը ներդրելով նրանց վրա զանազան հանքային պարարտանյութերով, ողտագործության առաջականացման համար կազմակերպության մեջ մասնակիություն ունենալու, ել բերք ենք ստանում ամեն տարի:

Հողի պարարտացման համար մենք ոգտագործում ենք՝ սուպերֆուֆատ, ծծմբաթթու, ամմոնի, չիլիի սելիտրա և աղբ:

VI. ԱԲԽԱԶԻԱՅԻ ԲՈՒՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ:

Արխագիայի բազմազան կլիման ու հողի զանազան տեսակները հնարավորություն են տալիս աճելու բազմատեսակ բույսերին: Առևտումում, Պարցիսայում, Գագրիում և ծովագի այլ պաշտպանված վայրերում աճում են մշտադալար բույսեր, որինակ՝ կիարոններ, նարինջ, մանդարին, թեյ, ծվաղենի, Զիթ են և այլ արժեքավոր մերձարևադարձյին բույսեր:



Ակ. 11 Մանդարինի բերքահավաքը:


Այդ բույսերը հսկայական նշանակություն ունեն մեր միության տնտեսական կյանքի համար:

ԽՈՐԴԵՆՈՒՑ (գերան), լի մոնի սորգոյից, և ուրիշ բույսերից ստացվում են յեթերային յուղեր, սամիից, նոր—զելանդյան վուշից, ագավայից՝ տեքստիլի հումույթ մեր ֆաբրիկաների համար:

Կան դեղային բույսեր (կամֆարային դափնի և այլն.)

Կան բույսեր, որինակ՝ միմոզա, եվկալիպտ՝ վորոնցից պատրաստմ են դաբաղելու նյութեր:

Ծովագինյա շերտում աճում են սաղարթավոր ծառեր, վորոնք կորցնում են իրենց կանաչ սաղարթը տարին մեկ անգամ:



Ակ. 12 Եվկալիպտ


Ջրանք են՝ կաղնի, բուխի, շագանակի, լաստենի (յայքենի) և մրգատու բույսերի զանազան տեսակները:

Արխագիայի հսկայական արժեքավոր անտառները՝ հաճարի, յեղենի, շագանակի և այլք, պահպանվել են գլխավորապես լեռնային մասերում և Բզիբի, Գեղեցի ու Զիալտայի գետերի խոր կիրճերում:

Անտառով՝ ծածկված մակերեսույթը Արխագիայում հավասար է 387, 357 հեկտարի: Դա համարյա հանրապետության յերկրամասի կեսն ե: Ըստ ծառերի տեսակների, Արխագիայի անտառներում տեսակները հետեւյալ կերպ են դասավորվում հաճարի—անտառային մակերեսույթի՝ $40^{\circ}/0$ -ը, յեղենի՝ $28^{\circ}/0$ և այլն:

Արխագիայի անտառներում կան շատ արժեքավոր ծառեր՝ որինակ՝ տիսս (կարմիր ծառ) ու սամշիտ. վերջինս տեղավորված է Ալցդի, Ոկումի ու Գեղեցի կիրճերում:

Արխագիայի անտառները մեծ հարստություն են ներկայացնում մեր միության համար, դրա համար խորհրդային իշխանությունն սկսեց պլանաչափ կերպով ու մեծ քանակությամբ ոգտագործել այս: Կառուցվում է Բղիքի Անտառարդյուն-



նկ. 13 Յեղենի

նաբերական կոմբինատ: Բղիքի ֆար բիկաներում ու գործարաններում փայտից պիտի պատրաստվի թուղթ ու ստվարաթուղթ:




նկ. 14 Սամշիտ:

Բացի դրանից Բղիքի վողջ անտառային՝ մակերևույթը բազմակողմանի կերպով ոգտագործվելու յեւ հաճարի փայտը ոգ-

տակործվելու յեւ տակառների գամվածքների և կանկարասիքի պատրաստման վրա. յեղենին կոգտագործվի բացի թուղթը՝ նաև վորպես շինանյութ ու արկղների և ֆաներայի պատրաստման վրա:

Ինչ վերաբերվում է սամշիտին՝ նրա արտասովոր ամուր ու ծանր փայտեղենը շատ բարձր և գնահատվում: Խորհրդային միության մեջ նա միայն Արխագիայում ու Աղբբեջանում է պահպանվել մեծ քանակությամբ: Սամշիտից պատրաստում են գործվածքային մաքրներ մանուֆակտուրային գործարանների համար: Նրա հաստատուն, պինդ ու գեղեցիկ փայտը ոգտագործվում և գորպես նյութ՝ փորագրությունների համար, փոխարինելով փղոսկը:




նկ. 15 Յեղջերու

Արտասահմանում սամշիտը գնվում և մեզնից մեծ հաճույքով: Բղիքի անտառարդյունաբերական կոմբինատը իրա անտառանյութը ստանալու յեւ Բղիք գետի ու նրա վտակ՝ Գեղեցիկիրում գտնվող անտառային մասսի վերից: Բղիքի կոմբինատից հետո իրա հզորությամբ յերկրորդն և

Կողորի փայտագործարանը. նա իրա անտառանյութը (զերաններ) ստանում է կողոր գետի միջոցով (Զխալտայի անտառամթերութիւնների շրջանից): Անտառանյութերի փոխադրման ձեւը դեռ ևս քիչ են մեքենայացված. հետագայում կողորի փայտագործարանը ծավալվելու յէ Բզիբի անտառարդյունաբերական կոմբինատի նմանությամբ: Վորովինեան Արխազիան իրա հողամասի մեծ մասով լեռնոտ յերկիր ե, ապա դրա համար ել փոխվում է նրա բուսական աշխարհը՝ յեթե մենք ծովափից բարձրանանք դեպի լեռները: Այստեղ մենք հանդիպում ենք իրար հաջորդող բուսական զոնաների, սկսած մերձարևադարձայինից մինչև թղուկային բույսերն ու գլխավոր լեռնաշղթայի ժայռերի վրայի բարաքոսերը:

VII. ԱԲԽԱԶԻԱՅԻ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐԴԸ:

Կլիմայական պայմանների ու բուսական աշխարհի բազմազանությունը պայմանավորում է նաև կենդանական աշխարհի բազմազանությունը: Արխազիայում մենք հանդիպում ենք կենդանիների ու թռչունների բազմաթիվ ներկայացուցիչների:




նկ. 16 Կղարիսներ:

Արխազիայի անտառներում մենք հանդիպում ենք հետեւյալ վայրի կենդանիներին. գայլեր, չափականեր, աղվեսներ, արջեր, վարազներ, վայրի կատուներ, տեղ—տեղ այծյամներ. իսկ լեռնային մասում տուրեր, քարայծեր, յեղջերուներ և այլն՝ կան նաև կղաքիսներ ու ջրասամոյրներ, վորոնց մորթին արդյունաբերական նշանակություն: Թռչուններից՝ փաս-

յաններ, լեռնային ճնդկահավեր, բազեներ և ուրիշ:

Զվող թռչուններից՝ բաղեր, սագեր, ծիծեռնակներ և այլն:



նկ. 17 Այծյամ

Ընտանի կենդանիներից մեզ մոտ կան կովեր, խոզեր, գոմեշներ, այծեր, վոչխարներ. իսկ թռչուններից՝ հավեր, հընդկահավեր, բագեր ու սագեր:

Հարցեր: Ինչու Արխազիայի բուսականությունը բազմազան է: Անվանեցեք մերձարևադարձային բույսերը: Անվանեցեք և ցույց տվեք քարտեղի վրա, վորանեղ ևն գտնվում մեծ անտառները: Անվանեցեք արժեքավոր փայտեղեն ունեցող բույսերը: Ինչ և տալու մեզ Բզիբկոմբինատը: Թվեցեք Արխազիայի կենդանական աշխարհի տեսակները. վայրի և ընտանի կենդանիները առանձին—առանձին:

VIII. ԱԲԽԱԶԻԱՅԻ ՀԱՆՔԱՅԻՆ ՀԱՐՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:


Արխազիայի ընդերքը, մանավանդ լեռնային մասում շատ հարուստ է ոգտակար հանքերով:

Արխազիայի հանքային հարստությունների մեջ իրա անտեսական նշանակությամբ առաջին տեղն է բոնում տկվարչելի քարածուրի լին:

Նա տեղակորպված է շերտերով Ալցզա գետի վերին հո-

անքում, ծովի մակերևույթից մոտ 300 մետր բարձրության վրա: Գոնվում ե զլխավորապես Ակարմարա—Զանտոս—Խեչիկվարայի շրջաներում: Հանքը՝ տարածված ե 45 կմ. մակերևույթի վրա: Մշակման համար ողտակար՝ քարածուխի արդյունաբերական պաշարը վորոշում են 48 միլ. տոնն: Տղվարչելի արդյունաբերական քարածուխը մեր միության մետաղագործարներին կտա չափազանց կարևոր և արժեքավոր կոքս: Տղվարչելի շրջանը առատ է նաև գաճի ու կրի հարուստ շերտերով: Քարածուխի հանքեր կան նաև Բղբեսի գետի ձախ ափին, Կալդախավարի շրջանում: Վերջինս գեռ չի ուսումնասիրված, սակայն Համկոմկուսի Կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի վորոշման մեջ ուղղակի հիշված ե, որ անհաժեշտ և ավարտել Բղբեսի քարածխային հանքավայրի հետազոտական աշխատանքները:

Բացի քարածխից, Արխագիայի շատ վայրերում կան ուրիշ մետաղների ու հանքերի շերտեր:



նկ. 18 Ասալինստրոյ (Տղվարչել)

Զիշրա լեռան վրա գեռ հին ժամանակներից հայտնի յեն արձային հանքերը, վորոնք պարունակում են 830/0 մաքուր արձին (կապար): Նույնանման արձային հանք՝ պղինձ ու արծաթի հետքերով հանդիպում ե Խիմցա լեռան վրա, Գումատայի վերին հոսանքներում Զամփալ գետի վերին հոսանքում, Ոկում գետի վրա և Դոռւլյակ վայրում (Բղբեսի լեռնաշարքի վրա):


Զիշրա լեռան վրա և Գալիի ույնոնի լեռնալանջերին դըտնված են ցինկի հանքեր:

Հայտնաբերված են յերկաթահանքեր Բղբեսի ակունքներում Բաղկապսարայի արոտների մոտ, Կոդոր գետի հովտում և Ալլցգա գետի ավազանում (Տղվարչելից հյուսիս—արևելք):

Այդ բալոր վայրերը գեռ ինչպես հարկն ե չեն հետազոտված: Մնացած ողտակար հանածոներից կան՝ ասքեստի (կրտավաքար) շերտեր Սակեն գետի ակունքներում, մաքմարի հանքեր Ախատայի վայրում (Զիխավա—Խիմցա արոտների ձամբին) և Զիսորթովի գյուղի մոտ, ասքալտի (գետնաձյութ) հանքեր Գագրայի լեռնաշղթայի (Ախիբշա) լանջերում, կավիճ Գալիի ույնոնում:

ՀԱՆՔԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ:

Արխագիայում վաղուց հայտնի յեն Տղվարչելի ու ակտի վրուժիչ հանքային աղբյուրները:



նկ. 19 Տղվարչելի հանքային աղբյուրները:

Մեծ ժողովրդականություն են վայելում զյուղացիական աղբաբնակչության մեջ Շխաղձայի արոտներում զտնվող (Բղղի գետի ակունքներում) ածխաթթու (նարզանի) աղղոքուրները Առատափարայի աղլուրները (Բղբեսի Արխագիայի լեռներում), ծծմբային աղբյուրները Ազգարայի կիրճում (Զիալտա գետ), Տղվարչելի բուժիչ աղբյուրը (Աղի գյուղի մոտ), աղային աղբյուրները Գագրիի ույնոնում, Սակեն լեռների հանքային աղբյուրները:

Կան աղբյուրներ նաև Աժարայի շրջանում ու Արխագիայի շատ ուրիշ տեղերում: Արխագիայի կուրորտային վարչությունը ուսումնամիրել է այդ աղբյուրները և շատ տեղերում ինկատի ունի զարգացնելու կուրորտային շինարարությունը:

Հարցեր: Ցույց տվեք Արխագիայի քարտեղի վրա, վորտեղի են դանում Տղվարչելի քարածխային հանքերը: Ինչով և նախավոր Տղվարչելի քարածուխը: Գտեք քարտեղի վրա մետաղի հանքավայրերը: Գտեք քարտեղի վրա հանքային աղբյուրների տեղերը: Անվանեցեք հանքային աղբյուրներ, վորոնք հայտնի յին զրույցներից:

IX. ԱԲԽԱԶԻԱՅԻ ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ:

Ամբողջ Արխագիայում ապրում են 242. 454 մարդ: Նրանցից՝ քաղաքում ապրում են 43311 մարդ, իսկ մնացած ազգաբնակչությունը՝ 199. 143 մարդ, դյուդական բնակչությունն եւ: Ազգաբնակչության մեծամասնությունը, ինչպես տեսնում ենք, դյուդական եւ: Խորհրդային իշխանության որոք Արխագիայի ազգաբնակչությունն սկսեց արագորեն աճել վորը յերեսում և հետեւյալ տախտակից:

Տարիներ	Քաղաքի ազգաբնակչություն	Դյուդի ազգաբնակչություն	Ընդամենը
1921	27. 221	152. 091	179. 317
1926	31. 305	165. 787	197. 092
1930	35. 234	188. 752	222. 986
1931	36. 290	192. 147	228. 437
1933 թ. 1-ին	43. 311	199. 143	242. 454

Արխագիայի աշխատավոր ազգաբնակչության թվի աճը բացատրվում է նրա բնական աճմամբ:

Այդ աճումը տեղի յեւ ունենում չնորհիվ նրա, վոր Խորհրդային իշխանության որոք քարձրացավ աշխատավորության տնտեսական և կուլտուր-կենցաղային վիճակը:

Արխագիայի աշխատավոր բնակչությունը այժմ շատ ավելի լավ է ապրում, քան Խորհրդային իշխանությունից առաջ, այսինքն ցարի ու մենշեկիների որով:

Պարտադիր ուսուցման ու անգրագիտության վերացման չնորհիվ քարձրացել է կուլտուրական մակարդակը՝ տըրպում և լայն բժշկական ողնություն տեղերում և այլն:

Արխագիայի աշխատավոր ազգաբնակչության հանդեպ խորհրդային իշխանության ձեռք առած միջոցառումները զգալիորեն պակասեցրին մահացումը և ավելացրին ծնվողների թիվը:

Արխագիայի բնակչության արագ աճը բացատրվում է հանրապետության ժողովրդական տնտեսության աճմամբ:

Մենք կառուցում ենք գործարաններ, ֆարբիկաններ, անցենք կացնում յերկաթ—գծեր, մշակում ենք Տկվարչելի քարածուխը և այլն, և դրա հետ միասին աճում է նաև բանվոր գտակարգը:

Այդ բոլորը ձեռք և բերված կոմ. կուսակցության դեկավարության տակ:

Բնակչության հիմնական մասսան, այսինքը $\frac{2}{3}$ -ը կազմում էն վրացիներն ու արխագիները:

Արխագիները ապրում են հետեւյալ ույոններում.— Ոչեմչիրի (66, 7%), Գուդառութի (57, 5%), Գալիի (17, 7%), Գաղրիի (5, 7%) և Սուխումի (3, 0%):

Բանվոր—գյուղացիական իշխանությունը հաղթականորեն առաջ է տանում սոցիալիստական շինարարությունը թե քաղաքում և թե դյուդում:

Սոցիալիստական շինարարության մեծ հաջողությունները ավելի սրբեցին դասակարգային պայքարը:

Կապիտալիստական ելեմնաների դիմադրությունը կազմակերպված ու գնուական հարված և ստանում աշխատավորության կոմիտե ղեկավարության տակ:

Այդ պայքարի մեջ աշխատավորությունը՝ բանվորները, կովառզնիկները, չքավորներն ու միջակները—հույները, հայերը, վրացիները, արխագիները, ոռուներն և ուրիշ ազգությունները միացյալ կերպով կովում են ընդհանուր դասակարգային թշնամու դեմ:

X. ԱԲԽԱԶԻԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ:


Տասներեք տարի առաջ Արխագիայում չկային գործարաններ ու ֆարբիկաներ, յեթե չհաշվենք մի քանի տնայնագործական աղյուսի գործարաններն ու սղոցարանները, վորոնք շատ վատ եյին կահավորված: Տեղական ազգություններից շատքից բանվորներ կային այդ ձեռնարկությունների մեջ: Գյուղատնտեսությունն ամենահետամաց աստիճանի վրա յեր մեզ մոտեն ինչ մեր յերկրի բնական արտադրողական ուժերը շատնպաստավոր եյին Արխագիայի ինդուստրիալ ու գյուղատնտեսական զարգացման համար:

Իսկ ինչ ունենք հիմա:

Այդ հարցին պատասխան է տալիս Արխագիայի Ա. Ս. յի. Հ. կենտրոն կոմի նախագահ ընկ. Ն. Լակոբան 1933 թ. 29/Լի իր գեկուցման մեջ առաջին հսկամյակի արդյունքների մասին:

1928 թվին Արխագիայում կար 44 արդյունաբերական ձեռնարկ, այժմ՝ 172. 1928 թվին Արխագիայում կար 464 բանվոր, այժմ՝ 3. 349 բանվոր. 1928 թվին Արխագիայի կոլյողներում կար 106 գյուղացիական տնտեսություն, այժմ՝ 14. 317. 1928 թվին Արխագիայում կար 7 խորհ. տնտեսություն, այժմ՝ 30 խորհ. տնտեսություն և 4 կոոպ. տնտեսություն: 1928 թվին Արխագիայում չկար վոչ մի տրակտոր, հիմա Արխագիայում կա 141 տրակտոր, կառուցված են յերկու Մ Տ Կ (մեջնա-տրակտորային կայաններ): 1928 թվին Արխագիայի բյուջեն հավասար եր 4. 580 հազար ռուբլու, իսկ 1933 թվին 23 միլիոն ռուբլուց ավելի (առանց Տղվարչելի, Բգիրի, Աւ—ծովյան յերկաթուղագծի կավիտալներությունների) և այլն:

ԻՆԴՈՒՍՏՐԻԱՑՈՒՄ: Մենք ունենք խոշոր ինդուստրիալ ձեռնարկություններ. զբանց թվում առաջին հերթին Ստալինստրոյ (Տղվարչելստրոյ) Բգիր Կոմբինատ և այլն:



Կն. 20 Տղվարչելստրոյ.

Տղվարչելի քարածուխի հետախուզության սկսվել են Խորհրդային իշխանության որով և ամբարտվել են կարճ ժամանակա միջոցում:

1929 թվին սկսվեց քարածխային հանքերի կառուցումը, իսկ 1931 թվին ծավալվեց լայն շինարարություն 14. 000 000 ռու-


բլու գինանսական սլանով: Այն ժամանակվանից ել ձեռնարկվեց լարային ճանապարհի կառուցմանը, վորի շնորհիվ քարածուխը Ակարմարայից պիտի իջեցվի դեպի Կիեվան: Նմանապես ձեռնարկվեց բանվորների բնակարաններին ու կենցաղային պայմանների բարելավման նպաստող շինարարության:

Տղվարչելստրոյի ներդրություն աճումն են աստիճանաբար և 1933 թվի վերջին համեմու յեն մինչև 40. 000 000 ռուբլու:

Տղվարչելի քարածուխի ոգտագործման հարցը Արխագիայի, Վրաստանի, Ա. Ս. Յ. Հ.-ի և վողջ Միության պետական պլանների մեջ խոշորագույն խնդիրներից մեկն եւ:

Արժեքավոր կոքս տվող Տղվարչելի քարածուխի մոտիկությունը ծովափին՝ շատ կարեոր և նպաստավոր հանգամանք և մետաղագործարանների մատակարարման համար:

ՄԵՏԱՂԱԳՈՐԾՎԱԿԱՆ ԿՈՔՍ տալու տեսակետից Տղվարչելի քարածուխը չի զիջում անգիտական քարածուխին:



Կն. 21 Լարային ճանապարհ.

Կոքսացող Տղվարչելի քարածուխն ոգտագործվելու: յե մետաղագործարանների համար:

Ոչեմչերից կվեզան արդեն անց և կացված յերկաթուղագծային ճյուղ, վորը միացը Տղվարչելի շրջանը Անդրկովկասյան յերկաթուղագծերի ցանցի հետ:

Այդ ուղիով ե դնալու Տղվարչելի քարածուխի առաջին պարտիան մետաղագործարանների կարիքների համար:

Տղվարչելի քարածխային շրջանը մեծ դեր է խաղալու վոչ միայն սկ մետաղագործության գորգացման համար, այլ և ա-

պագայում Կվեղան—Ռչեմչիքի ռայոնում կառուցվելիք կոքսուքի միակ ական հզոր կոմբինատի համար, վորը արտադրելու յե զանազան պրոդուկտներ

Ակարմարայից Կվեղան կառուցվող լարային ճանապարհը ավարտվում է, և 1934 թվի ապրիլ ամսին սկսվելու յե Ստամբուրոյի բոլոր հանքահորերի կանոնավոր շահագործումը:

Այդ ժամանակամիջոցին ավարտվելու յեն՝ Ակարմարայի բարձող կայարանը. Կվեղանի վերջին կայարանը, յերեք հանդույցային կայաններ, յոթը լարային խարիսխող-ձգող կայմերու 49 հենակող կայմեր. Ամբողջ գծի յերկարությամբ ձգվելու յեն լարեր:

Տղարչելի հանքերում բանվորների թիվը համուռմ է մի քանի հազար հոգու, վորոնց թվում կան և տեղական ազգություններ՝ արքայազներ, վրացիներ, հայեր և այլն:

Ահա թե ինչպիսի հոյակապ աշխատանք է ծավալվում Տղարչելսարույրում, վորը մինչ Խորհրդային իշխանությունը համարվում էր Աբխազիայի ամենախուլ անկյուններից մեկը:

Տղարչելսարույրից հետո Աբխազիայի յերկրորդ ինդուստրիալ ոջախն է Բզիքստրոյը:

Բզիք գետի ունրա վտակ Գեղեցի կիրճերում փռված անտառային տարածություններն, որ աճում էն արժեքավոր ծառեր՝ սամշիտի, շաղանակի, հաճարի, յեղինիի—համուռմ-են մինչև 90. 000 հեկտարի:

1929 թվին ձեռնարկվեց այդ խոշորագույն կոմբինատի շինարարությունը. Փայտեղենը մթերվելու յե հեռու, լեռներում: Գեղեց և Բզիք գետերի միացման վայրում կառուցվելու յեն գործարաններ ու 10. 000 ձիու ուժի համուղ ելեկարուկայան:

Այսուղից վերամշակված փայտի զանգվածը (ցելլյուլոզ) հատուկ խողովակներով թեքությամբ հոսելու յե Պիցունդա, վորանու կառուցվելու յե թղթի փարբիկա, վորն այդ զանգվածը փերամշակելով դարձնելու յե թուղթ և ստվարաթուղթ: Պիցունդա յեն իջնելու հատուկ պատրաստված առուներով նաև գերաններ: Պիցունդայում կառուցվելու յեն կոմբինատի հետեւյալ գործարանները. սոլոցարան, ֆաներայի ու արկղի:

Պիցունդայի նավահանգստում կառուցվելու յե նավամատուց. 1932 թվին Բզիք կոմբինատի շինարարության համար բաց եր թողնված 8. 000 000 ռուբլի:

Բզիքի անտառարդյունաբերական կոմբինատի արտադրանքը մեծ յեկամուտ է տալու Խորհրդային Միությանը:

Արտադրանքի մի մասը գնալու յե արտասահմանյան շուկաները, մնացյալ նյութն ոգտագործվելու յե Միության ներքին կարիքների համար:

Բզիքի անտառարդյունաբերական ձեռնարկի անտառարդյունաբերական ձեռնարկներից կարելուագույնն է Կոդորի սղոցարանը, վոր գոնվում է Սուխումից 22 կլմ. հեռու, Կոդոր գետի ափին:

Այդ գործարանն ունի սեփական՝ առաջմ 295 ձիու ուժանոց ելեկարուկայան: Հումուութը (գերանները) ստանում է Զխալտայի փայտամթերումներից (Զխալտա գետի վրա): Փայտը (գերանները) իջեցվում է գետով: Դա կապված է մեծ զրժվարությունների հետ: Գործարանն ունի 4 սղոցային շրջանակի Տարեցարի աճում է անտառանյութերի արտադրանքի տարեկան նորման:

Կոդորի սղոցարանի արտադրանքի մի մասը գնում է արտասահման (Բաთუմիա), մնացյալը սպառվում է աբխազական շուկայում:

Բացի այդ խոշոր անտառարդյունաբերական ձեռնարկություններից Աբխազիայի փայտամթակությունը առ գուն 24 ձեռնարկություն. 11 սղոցարան, մի քանի փայտամթակություններ, բամբուկե կանկարասուարհետանոց և այլն:

ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐԻ ԱՐԴ.—15 աղյուսի գործարաններ, վորոնցից ամենախոշորը Սուխումի աղյուսի—կղմինդրի գործարանն է, 8 կրի գործարաններ, մեկ ալաբաստրի:

ԿԱՇՎԵ—ԿՈՇԻԿԱՅԻՆ ԱՐԴ.— Ունի 17 ձեռնարկություն, նրանցից նշանավոր են Սուխումի կաշեգործարանը ու կոշիկի արտեկները:

ՏԻՐԿՈՏԱԺԻ ԱՐԴ.—Ունի 3 գուլպա—տրիկոտաժային ձեռնարկություններ, վորանու պատրաստում են մայկաններ, ֆուֆայկաններ և այլն.

Աբխազիայի ՔԻՄԻԱԿԱՆ Ա. Բ Դ Յ Ա Խ Ն Ա Բ Ե Բ Ո Խ Թ Յ Ո Խ Ն Ն Բ Ն Կ Ա Մ Ի Ո ւ Ն ի լ ա յ ս ո ր ե ն ծ ա վ ա լ վ ե լ ո ւ , շ ա ր հ ի վ մ ե ր ձ ա ր ն ա ղ ա ր ձ ա յ ի ն բ ո ւ ս ա կ ա ն ն հ ո ւ մ ո ւ յ թ ի գ ո յ ու թ յ ա ն — յ ե թ ե ր ա ր ե ր ն ե ր (խ ո ր դ ե ն ի և ա յ լ ն), դ ե լ ֆ ի ն ի ճ ա ր պ և ո ւ ր ի շ ի մ ա կ ա ն 12 ձ ե ռ ն ա ր կ ու թ յ ու ն ե ր .— 5 յ ե թ ե ր ա — ձ ի թ ա յ ի ն , վ ո ր ա ր տ ա դ ր ո ւ մ ե ն յ ե թ ե ր ա յ ի ն յ ո ւ ղ ե ր ի : Դ ա շ ա տ կ ա ր ե ս ո ր ե , վ ո ր ո վ հ ե տ ե ն ե տ ա գ ա յ ո ւ մ յ ե թ ե ր ա յ ի ն յ ո ւ ղ ե ր ի ա ր տ ա դ ր ա ն ք ը վ ե ր ջ ն ա կ ա ն ա պ ե ս կ ա զ ա տ ի Ս. Խ. Մ. Վ ո ր ո ւ ա ր ե ր կ ր յ ա ն ե ր մ ո ւ ծ ու մ ի ց : Յ ե թ ե ր ա յ ի ն յ ո ւ ղ ե ր պ ա տ ր ա ս տ ո ղ գ ո ր ծ ա ր ա ն ն ե ր ի կ ա ն Գ ա ր դ ի ի , Գ ո ւ ղ ա ո ւ տ ի և Ս ո ւ խ ո ւ մ ի ո ւ յ ո ւ ն ն ե ր ո ւ մ : Դ ե լ ֆ ի ն ի — ճ ա ր պ ա ն ա լ գ ո ր ծ ա ր ա ն ո ւ ն ե ն ք Պ ի ր ց խ ա յ ի մ ո տ և մ ի շ ա ր ք ս ա լ ո ւ ն ի գ ո ր ծ ա ր ա ն ն ե ր :

Մ Ն Ն Դ Ա Հ Ա Մ Ի Ա Ր Դ.— Ունի 34 ձ ե ռ ն ա ր կ ո ւ թ յ ո ւ ն , վ ո ր ո ն ց ի ց ա ն ա խ ո շ ո ր ն ե ն Ս ո ւ խ ո ւ մ ի ծ խ ա խ ո տ ի ֆ ա ր բ ի կ ա ն , ֆ ե ր մ ե ն տ ա ն կ ա ր ի ք ն ե ր ի հ ա մ ա ր :

ցիռն ծխախոտի գործարանները, Գուղառուտի ողեղործական ու կոնյակի գործարանը, Գալիի թեյի ֆաբրիկան, Սուխումի պահածոյի (կոնսերվի) ֆաբրիկան և մի շարք գինու, լիմոնադի և այլ գործարաններ:

17-րդ կուսկոնֆերանսը նշեց, վոր բնակչության ապահովումը հիմնական սպառողական ապրանքներով, վորոնց թվում և սննդամթերքներով պիտի ավելանա 2-րդ հնդամյակի վերջում վոչ պակաս, քան 2—3 անգամ, համեմատած 1-ին հինգամյակի հետ, ուստի և Մատակարարության ժողկոմատի Արբազական լիազորության պլանից, յերկում ե, վոր 2-րդ հնդամյակում Արբազիայի մննդհամի արդյունաբերությունը ստանալու յե մեծ չափեր: Կառուցվելու յեն մի շարք մրգեղենի ու ձկնեղենի պահածոյի հզոր ֆաբրիկաներ, կառուցվելու յե նոր ծխախոտի ֆաբրիկա, յենթաղբարկում ե պահածոյի ֆաբրիկայի կառուցումը Դրանդայում, սալոր չորացնելու գործարանը Պիլենկովոյում, մրգեղենի գործարաններ Գալիում, Գաղըիում և այլն:

ԱԲԽԱԶԻԱՅԻ ՊՈԼԻԳՐԱՖ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ունի 4 արպարան:

ԿԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ունի 8 ձեռնարկություն՝ կարի արհեստանոցներ:

ԹԵԼԱՆՅՈՒԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՐԴ—մաքրած բամբակի արտադրություն, վերնակի—ներնակի արտադրություն:

Կան ուրիշ կոռպերատիվ ու արտելային արտադրություններն չեմոդանի, կավագործական ամանների, թիթեղյա իրերի և այլն.


Արտադրության հիշյալ ճյուղերի մեծ մասը (մոտ 30 արդյունաբերական ձեռնարկ) միացնում ե „Արագոմոյուղը“, վորը համարվում է Արբազիայի քաղաքներում ապրող արհեստավորանայնագործների ամենախոշոր կոռպերատիվ միությունը:

Ինչ վերաբերվում է Արբազիայի գյուղական վայրերում գոյություն ունեցող տնայնագործական արդյունաբերությանը, — նա աստիճանաբար կը ճատկում է ֆաբրիկաների արտադրանքի շնորհիվ: Տնային գործվածքների (մահուղի,) բրդե գդակներ (Արբազական Սվանեթիայում) տնային գործածության համար պահպանվել են գեռ Արբազիայի լեռնային մասերում:

Արբազիայի տնայնագործության մեջ հատուկ տեղ է գրավում:


Գորդագործությունը Լավագույն գորգագործ—գարպետներ կան այժմս ել Բգիբյան Արբազիայի գյուղերում, որ Աշանդարա, Ոթխարա, Բլաբուրխա, և Խուապ գյուղերում:

ԵԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱ: Արբազիայի ժողովրդական անտեսության վերակառուցումը հետպելու յե եներգետիկ բազայի՝ ելեկտրական եներգիայի վրա: Արտադրության ու նյութերի վերամշակման մեջենայացումը ուղղակի կախման մեջ ե ելեկտրական եներգիայից: Այդ եներգիայով մենք ջարժում ենք մեքենաներն



Նկ. 22 Կողորի սղոցարանը.

ու գաղգյաները, այդ եներգիան մեզ տալիս ե ջերմություն ու լույս և այնու իգուր չել Վ. Ի. են ի նը հսկայական նը-



Նկ. 23 Ոթխարայի գորգագործներ:

շանակություն տալիս ելեկտրիֆիկացմանը, ասելով. „Կոմմունիզմ—դա Խորհրդային իշխանությունն ե, պլյուս վող յերկի ելեկտրիֆիկացիան:


Արխագիայի ժողովրդական անտեսության պլանների կատարման համար մեղ անհրաժեշտ է ելեկտրոէներգիան և լեռնային արդյունաբերության և անտառային, և՝ Սև—ծովյան յերկաթուղագծի ելեկտրիֆիկացման համար:

Արխագիայի հիդրո—եներգիայի պաշարը հաշվվում է մոտ կես միլիոն ձիու ուժ։ Այդ պաշարները աստիճանաբար ոգտագործվելու յեն։

Երդին կառուցվում է Սուխումի հիդրոէլեկտրոկայանը, հզորությամբ մինչև 20. 000. կվառվատ։ Նա կառուցվում է Գումա գետի վրա և սպասարկելու յի Սուխումի ու նրա շրջակայքը, նմանապես և ամբողջ ծավակը մինչև Գուգառուս։

Հետագայում ծավալիվելու յի հիդրո—կայանների կառուցումը Ապաղա գետի վրա՝ Տղվարչելի ույշոնի համար, Կողոք գետի վրա՝ Կողոքի ույշոնի համար և Բզիք գետի վրա՝ Բզիքի ույշոնի համար։

Ներկայումս Արխագիայում կա 10 ելեկտրո—կայան, վորոնցից յերեքը՝ հիդրո—կայաններ—Սուխումի, Պսիրցիայի և Գագրիի, յոթը՝ շերմային—Տղվարչելի, Սուխումի, Գուգառուսի, յերկու Գուգառիպշի, Ռչեմչիրի, Գալիբ։ Այդ կայանների հզո-



նկ. 24 Արխագական արոր.

րությունը փոքր է, ուստի Արխագիան յերկրորդ հնգամյակում պետք է մաքսիմալ չափով ոգտագործի “սպիտակ ածուխի” հսկայական պաշարը։

Հարց երրորդ թվեցեք Արխագիայի խոշոր ինդուստրիալ կենտրոնները։

Ցույց տվեք քարտեզի վրա, պատմեցեք, ինչով են նրանք նշանավոր։


Թվեցեք մնացյալ արդյունաբերական ձեռնարկները, վորոնք կառուցված են խորհրդային իշխանության որով. պատմեցեք, թե նրանք ինչ են արտադրում։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ.

Արխագիայի բնակչության մեծ մասը զբաղվում է գյուղատնտեսությամբ, ավելի ճիշտ հողագործությամբ։

Տասներեք տարի առաջ զիմավոր ցանքայիշն եր յեղիպտացորենը։ Մնացյալ արդյունավոր մշակույթներից քիչ զբաղվում եյին ծխախոտագործությամբ։ Յեղիպտացորենի ու ծխախոտի հողը մշակում եյին (ներկում) արորով, տափանում եյին ցախից գործված տափանով։ Յերբ հողը ուժապատ եր լինում, թողնում եյին հանգստանալու, վորովինու հանքային պարագատանյութերի մասին չգիտեյին։

Խորհրդային իշխանության որով, աշխատավորության շահերի համար, բոլորովին վերափոխվում է գյուղատնտեսությունը։



նկ. 25 Տրակտորներ

Յեթե առաջ յուրաքանչյուր գյուղացի առանձին եր աշխատում մե վորքիկ պատառ հողի վրա, ապա հիմա չքափոր գյուղացիները, բատրակները, միջակ գյուղացիները մասսայաբար մտան կոլխոզների մեջ։ Ինչո՞ւ։

